

ՏԵՂԱՅԻՆ ՍԵՄԻՆԱՐՆԵՐ

- ✓ 2012թ. նոյեմբերի 7-ին ՀՀ ԱՎԾ «ՊՎՏՀ» ծրագրի բնապահպանության վիճակագրության ոլորտի մուտքագրող օպերատոր Ա. Պողպոմոզովան մասնակցել է ք. Երևանում կայացած «ՀՀ-ում ժամկետանց թունաքիմիկատների մոնիթորինգ և վերլուծություն՝ դրանց էկոլոգիապես անվտանգ հեռացման նպատակով» ծրագրի եզրափակիչ սեմինարին,
- ✓ 2012թ. նոյեմբերի 9-ին ՀՀ ԱՎԾ վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժնի գլխավոր մասնագետ Ա. Դաշյանը և նույն բաժնի առաջին կարգի մասնագետ Ա. Շաբոյանը մասնակցել են ք. Երևանում կայացած «Նորարարական ձեռներեցության խնդիրները և լուծումները» խորագրով կլոր սեղանին,
- ✓ 2012թ. նոյեմբերի 9-11-ը ՀՀ ԱՎԾ մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ. Կոկոմյանը մասնակցել է ք. Ծաղկաձորում կայացած մարդկանց շահագործման /թրաֆիկինգի/ հարցերով խորհրդին կից աշխատանքային խմբի արտագնա նիստին,
- ✓ 2012թ. նոյեմբերի 12-ին ՀՀ ԱՎԾ միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ Ա. Սաֆյանը մասնակցել է ք. Երևանում կայացած ՀՀ-ում ԵՄ պատվիրակության ղեկավար Տրայան Հրիսթայի հանդիպմանը ՀՀ պետական կառավարման մարմիններում Եվրոպական հարևանության և գործընկերության գործիքների պատասխանատուների հետ,
- ✓ 2012 թ. նոյեմբերի 15-ին ՀՀԱՎԾ աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ. Քալանթարյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Վերանայված Եվրոպական սոցիալական խարտիա» խորագրով սեմինարին,
- ✓ 2012թ. նոյեմբերի 15-ին ՀՀ ՎՊԽ անդամ Վ. Դավթյանը, ՀՀ ԱՎԾ միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ Ա. Սաֆյանը և հաշվապահական հաշվառման բաժնի գլխավոր մասնագետ Շ.Կչոզյանը մասնակցել են ք. Երևանում կայացած ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի գործողությունների պահանջները (բյուջետավորման,

ֆինանսական հաշվետվությունների և տեղային ստուգումների վերաբերյալ) խորագրով սեմինարին,

- ✓ 2012թ. նոյեմբերի 16-ին ՀՀ ՎՊԽ անդամ Գ. Անանյանը, ՀՀ ԱՎԾ միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ Ա. Սաֆյանը և գյուղատնտեսության վիճակագրության բաժնի պետ Ա. Ավագյանը մասնակցել են ք. Երևանում կայացած «Աջակցություն ՀՀ գյուղատնտեսական հաշվառման իրականացմանը» խորագրով աշխատանքային հանդիպմանը,
- ✓ 2012թ. նոյեմբերի 20-ին ՀՀ ԱՎԾ մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ. Կույումջյանը մասնակցել է ք. Երևանում կայացած մարդկանց շահագործման (թրաֆիկինգի) հարցերով խորհրդին կից աշխատանքային խմբի հանդիպմանը,
- ✓ 2012 թ. նոյեմբերի 21-ին ՀՀ ԱՎԾ աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ. Քալանթարյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Զբաղվածություն և զարգացում» խորագրով խորհրդաժողովին,
- ✓ 2012թ. նոյեմբերի 27-ին թվով 58 մասնակից մասնակցել են ք. Երևանում կայացած «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» (2011թ. տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության հիմնական արդյունքները) խորագրով շնորհանդեսին,
- ✓ 2012թ. նոյեմբերի 30-ին ՀՀ ԱՎԾ պարենային ապահովության վիճակագրության բաժնի պետ Ա. Ավետիսյանը, նույն բաժնի գլխավոր մասնագետ Մ. Խաչատրյանը և գյուղատնտեսության վիճակագրության բաժնի պետ Ա. Ավագյանը մասնակցել են ք. Երևանում կայացած «Բերքատվության կանխատեսման նոր մեթոդաբանության կիրառում» խորագրով քննարկումներին,
- ✓ 2012 թ. նոյեմբերի 30-ին ՀՀ ԱՎԾ աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ.Քալանթարյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «ՀՀ-ում օտարերկրացիների աշխատանքի և զբաղվածության և ՀՀ քաղաքացիների արտագնա աշխատանքային միգրացիայի վերաբերյալ ՀՀ օրենսդրական դաշտի վերլուծություն» խորագրով կլոր սեղանին,

- ✓ 2012թ. դեկտեմբերի 3-ին ՀՀ ՎՊԽ անդամներ Գ. Անանյանը և Վ. Դավթյանը մասնակցել են ք. Երևանում կայացած «Հայաստան-էլեկտրոնային կառավարման համակարգային զարգացում» ծրագրի շնորհանդեսին,
- ✓ 2012 թ. դեկտեմբերի 7-ին ՀՀ ԱՎԾ աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ.Քալանթարյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Միջնորդ կազմակերպությունների գործունեության նկատմամբ պետական մոնիթորինգի համակարգը, աշխատուժի փոխանակման շուրջ միջպետական պայմանագրի կնքման սկզբունքները» խորագրով սեմինարին,
- ✓ 2012թ. դեկտեմբերի 12-ին և 13-ին ՀՀ ՎՊԽ անդամ Լ. Պետրոսյանը, տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ Դ. Մարտիրոսովան և տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման բաժնի պետ Ա. Մարտիրոսյանը մասնակցել են ք. Երևանում կայացած ՀՀ կառավարության ու ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի երկրում համագործակցության 2010-15թթ. ծրագրի միջնաժամկետ վերանայմանը,
- ✓ 2012թ.դեկտեմբերի 12-ին ՀՀ ԱՎԾ աշխատակազմի միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի գլխավոր մասնագետ Հ. Եղիազարյանը մասնակցել է ք. Երևանում կայացած Թվինինգ ծրագրային առաջարկների ներկայացման 2012թ. երկրորդ շրջափուլին,
- ✓ 2012 թ. դեկտեմբերի 12-ին ՀՀ ՎՊԽ անդամ Յու. Պողոսյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Ժամկետանց պեստիցիդների պաշարների ոչնչացում և կայուն օրգանական աղտոտիչներով վարակված տեղանքների աղտազերծում՝ քիմիկատների անվտանգ կառավարման ծրագրի շրջանակներում» խորագրով սեմինարին,
- ✓ 2012թ. դեկտեմբերի 21-ին ՀՀ ԱՎԾ տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ Դ.Մարտիրոսովան մասնակցել են ք. Երևանում կայացած «Զրոգտագործողների միությունների և ջրօգտագործողների հետազոտության արդյունքների ներկայացում» խորագրով սեմինարին: